

ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» Մասնաճիւղի Տոհմիկ Օր

Զօնուած՝ Նախիջեւանի

Զեփիւո Տորնա

Շաբաթ Հոկտեմբեր 28, 2017-ի երեկոյեան Թորոնթոյի Հայ Կեդրոնը եռուգեռի մէջ էր: Շուրջ 315 հայորդիներ փութացած էին ըմբռնելու այս բացառիկ երեւոյթ հանդիսացող տօնակատարութիւնը՝ Հայ Օգնութեան Միութեան «Ռուբինա» մասնաճիւղի 24-րդ Տոհմիկ Օրը, որ այս տարի նուիրուած էր Նախիջեւանի եւ իր հինգ գաւառներուն: ՀՕՄ-ը իր առաքելութեան ճամբով, հայապահպանման եւ արդար իրաւունքներու պահանջատիրական ոգիով՝ անգամ մը եւս Տոհմիկ Օրերու կազմակերպութեամբ, տէր կը կանգնէր Հայ ազգի պատմական բնակավայրերու բարձր արժէքներուն եւ հարուստ մշակութային ժառանգութեան, զանոնք կը վերակենդանացնէր մեր յիշողութեան մէջ եւ կը փոխանցէր եկող սերունդներուն:

Հայ Կեդրոնի սրահը պատշաճօրէն զարդարուած էր Նախիջեւանի եւ հինգ գաւառներու՝ Գողթան, Երնջակ, Նախիջեւան, Ճահուկ-Շահապոնք եւ Շարուրի քարտէսով, սրահի պատերուն վրայ տեղադրուած էին Նախիջեւանի ու գաւառներու անունները եւ «ՆԱԽԻՋԵՒԱՆԸ ՏԱՐԱԾԻ ԶԷ, ԱՅԼ՝ ՀԱՅՐԵՆԻՔ» լոգոնքը, բոլորն ալ յատուկ պաստառներու վրայ սիրայօժարօրէն պատրաստուած՝ Զոհրապ Թաթիկեանի կողմէ: Ան նաեւ պատրաստած էր 17 խաչքարերը, որոնք գործածուեցան գեղարուեստական յայտագրի ընթացքին: Սրահին մէկ անկիւնը ցուցադրութեան դրուած էին զանազան փոքր խաչքարեր, հայկական իրեր, Հայաստանի մէջ լոյս տեսած Նախիջեւանի մասին շարք մը գիրքեր, ՀՕՄ-ի տոհմիկ օրերու 24 տարիներու ընթացքին լոյս տեսած գիրքերը, վիճակահանութեան նուէրները, որոնց մէկ մասը բերուած էին Հայաստանէն եւ լուռ աճուրդի դրուած հայկական ելեկտրական թոնիրը: Սեղաններու կեդրոնը զետեղուած էին Հայաստանէն բերուած հայկական գեղեցիկ արուեստի գործ՝ փայտեայ խաչքարեր:



ՀՕՄ-ի Տոհմիկ Օրուան ձեռնարկը քաջալերող բարեկամներ, անդամներ եւ հիւրեր ժամը եօթին սկսած էին հասնիլ կեդրոն: Սրահի մուտքին գիրքի յանձնախումբի անդամներ ներկաներուն կը բաժնէին Նախիջեւանի եւ հինգ գաւառներուն նուիրուած գիրքերը: Երկար ամիսներու պրպտումներու եւ համադրումի աշխատանքը բժավնորօրէն կատարած էր գիրքի

յանձնախումբը ու լոյս ընծայած այս բովանդակալից գիրքին: Պրպտումներու իբր աղբիւր գործածուած գիրքերու մեծամասնութիւնը հայրենիքի մէջ լոյս տեսած պատմաբան, մատենագէտ, նախիջեւանագէտ եւ մշակոյթի գործիչ Պր. Արգամ Այվազեանի գիրքերն էին: Գիրքը, 239 էջերու մէջ կը բովանդակէր պաշտօնական շնորահաւորագրեր, որ ուղարկած էին Հայաստանի Հանրապետութեան Արտակարգ եւ Լիազոր նախկին Դեսպան Արմեն Եզանեանը, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արքեպիսկոպոս Չարեանը, Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հայր Գեղարդ Օ. Վրդ. Քիւսպէկեանը, Թորոնթոյի ՀՅԴ «Ս. Թէփլիրեան» Կոմիտէն, Նախիջեւանի Հայրենակցական Միութեան Նախագահ Մելս Մկրտչեանը, եւ ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղի վարչութիւնը եւ Տոհմիկ Օրուայ Յանձնախումբը: Գիրքը կը ներառէր նաեւ նախաբան մը ուղարկուած Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի Պատմութեան Ինստիտուտի Տնօրէն՝ Աշոտ Մելքոնեանի կողմէ եւ այլ վաւերագրական յօդուածներ պատմաբաններու եւ նախիջեւանագէտներու կողմէ, ինչպէս՝ Արգամ Այվազեան, Յովհաննէս Ալեքսանեան, Թովմաս Պօղոսեան եւ Նախիջեւանցի Լուսիկ Ագուլեցի: Գիրքին ծաւալուն մասը կ'ընդգրկէր Հայերէնով եւ Անգլերէնով գրուած պատմական եւ աշխարհագրական տեղեկութիւններ Նախիջեւանի եւ իր գաւառներու, հայկական ճարտարապետական կոթողներու, խաչքարերու, որմնակարչական արուեստի մասին եւ անոնց բազմաթիւ գունաւոր եւ սեւ ճերմակ նկարները, որոնք աւա՛ղ այսօր գիրքերու մէջ մնացած են միայն: Տեղ գտած էին նաեւ Նախիջեւանցի ականաւոր դէմքերու կենսագրութիւնները եւ հովանաւորներու անունները: Գիրքի կողքի էջին հովանաւորն էր Տիկ. Ռիթա Պէքմէզեան-Շամլեանը, եւ Նախիջեւան նահանգի հովանաւորներն էին Տէր եւ Տիկ. Նազար եւ Նինա Չաթալեանները:

Հայկական տարագրով յանձնախումբի անդամները ներկաները կը հիւրասիրէին սրահի մուտքին եւ կը հրամցնէին կեռասի խմիչք եւ նուշով քաղցրեղէն: Ներկայ էին Թորոնթոյի Հայց. Առաքելական Ս.Աստուածածին Եկեղեցւոյ հովիւ՝ Հայր Գեղարդ Օ. Վրդ. Քիւսպէկեանը, Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովիւ՝ Հայր Եղիա Գիրեջեանը, ՀՅԴ Ս. Թէփլիրեան Կոմիտէի հերթապահ Ընկեր Վաչէ Գըլըպոզեանը, ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Ընկրհ. Վարսենիկ Սարգիսեանը, ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի Վարչութեան ատենապետուհի Ընկրհ. Անի Օհանեանը եւ վարչութեան անդամները, որոնք ժամանած էին Մոնթրէալէն, Համիլթընէն եւ Թորոնթոյէն:

Օրուան յայտագիրը սկսաւ Տոհմիկ Օրուան յանձնախումբի ատենապետուհի ընկերուհի Հուրի Նաճարեանի բացման խօսքով: Ան ներկաներուն բարի գալուստ մաղթելէ ետք հետեւեալ ձեւով արտայայտուեցաւ. - «...Նախիջեւանը հայրենիքի այն բեկորն է որ հազարամեակներ եղած է հայութեան բնօրան, ուր հայ ժողովուրդը ապրած եւ ստեղծագործած է բարձր մշակոյթ եւ զարգացուցած բարգաւաճ տնտեսութիւն: Արաքս գետի ափին երկարող 5,500 քառակուսի քիլոմէթր կազմող այս գեղատեսիլ տարածքը, Արցախի հետ միասին 1923-ին, անարդարօրէն Ատրպէյճանին յանձնուեցաւ... Աւա՛ղ այսօր հայաթափուած է Նախիջեւանը եւ ենթարկուած ահաւոր մշակութային եղեռնի: Աւա՛ղ հոն դադրած են Գողթան երգերը, լրած է 220-է աւելի հայկական վանքերու եւ եկեղեցիներու զանգակներու դողանջը... քանդուած եւ փշրուած են 27,000-ի հասնող հայկական ճարտարապետական կոթողները, յուշարձանները, տապանաքարերը, 10,000-է աւելի մեր հինաւորց ու հիասքանչ խաչքարերը... Նախիջեւանի Տոհմիկ Օրուան ոգեկոչման ընդմէջէն

կու գանք իրազեկ դառնալու մեր պապենական ժառանգին, պահանջատեր ըլլալու մեր արդար իրաւունքին եւ զայն փոխանցելու մեր ներկայ ու գալիք սերունդներուն... Հպարտ ըլլանք մեր ինքնութեամբ, բարձր պահենք հայու ոգին, տէր կանգնինք մեր ազգային ժառանգութեան, հաւատանք մեր արդար իրաւունքներուն եւ գործենք մէկ ազգ եւ մէկ ամբողջական հայրենիք նշանաբանով:»

Ան նաեւ ուրախութեամբ յայտարարեց որ այս ձեռնարկի հասոյթէն մասնաճիւղս հազար տոլար նուիրուած է նախիջեւանագէտ պատմաբան Պր. Արգամ Այվազեանին իր վերջին գիրքի «Նախիջեւան՝ Բնաշխարհիկ Պատկերագարդ Հանրագիտակ»-ի տպագրութեան համար, որ լոյս տեսած էր անցեալ ամիս:

Ան իր խօսքը վերջացնելէ առաջ շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներուն, գիրքի յանձնախումբին իրենց երկարատեւ, բժախնդիր ու նուիրեալ աշխատանքին համար նաեւ յանձնախումբի բոլոր անդամներուն, որոնք խանդավարութեամբ ծրագրեցին եւ կազմակերպեցին այս բացառիկ հայաբոյր երեկոն:

Պատկերիզի վրայ ներկայացուեցաւ Պր. Արգամ Այվազեանի եւ Տիկ. Լուսիկ Ագուլեցիի շնորհաւորական պատգամները: Ապա խորհրդանշական խաչքարերով մուտք գործեցին ՀՄԸՄ-ի արիներն ու արենոյշները եւ ԳԵՄ-ի անդամները ներկայացնելով «Խաչքարերու Կանչը» կենդանի պատկեր մը: Պատշաճ եղանակի ընկերակցութեամբ հեզաճկուն մենապարով մասնակցեցան Ռուբինա Սարգիսեանը եւ Յովհաննէս Յարութիւնեանը, համադրումը կատարած էր Լոռի Նաճարեանը:

Հայր Գեղարդ Ծ. Վարդապետ Քիւսպէկեանը եւ Հայր Եղիա Ծ. Վարդապետ Գիրէջեանը կատարեցին սեղանի օրհնութիւնը, որմէ ետք Հայր Գեղարդը տուաւ իր սրտին խօսքը: Ան գնահատեց ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղն ու իր Տոհմիկ Օրուան յանձնախումբի անդամները, որ երկար տարիներէ ի վեր հաւատարմօրէն կը շարունակեն տօնակատարել հայկական աւանդոյթներուն եւ հարուստ մշակոյթին նուիրուած այս տարեկան ձեռնարկները: Ան շարունակեց ըսելով որ այս տարուան ձեռնարկը կը յիշեցնէր թէ Նոյ նահապետին ընտանիքը էջք կատարած էր «Նախ-Իջեւան», նոր սկիզբ մը, աշխարհին մէջ տարածուելու նոր յոյս մը տալով եւ թէ այս օրուան տօնակատարութիւնը կը զուգադիպէր «Գիւտ Խաչի» տօնին: Ան ըսաւ.- «Երբ կը խօսինք Նախիջեւանի մասին.... կու գանք մենք մեզ յուսադրելու եւ ներշնչելու թէ խաչը ո՛չ կը թաղուի, խաչը ո՛չ կը քանդուի, խաչը ո՛չ կը կորսուի: Եթէ Հեղինէ թագուհին չորս դարէն ետք գտաւ Քրիստոսի խաչափայտը, այդ ալ մեզի կու գայ ըսելու թէ յոյսը ամօթով չի ձգէր մեզ: Նախիջեւանը յիշելը յոյսով լիցքաւորուիլ է.... Այս առթիւ կու գամ իմ խորին շնորհակալութիւնս յայտնելու ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճիւղին, այս սքանչելի բանակին, որ ոչ թէ միայն անցեալի պատմութիւնը կը յիշեցնէ մեզ, այլ կու գայ ներկայի մէջ մեր ինքնութիւնը ամրացնելու եւ դէպի ապագայ մեզ յոյս ներշնչելու...»:



Պատմական վաերագրական պատկերիզ մը, պատրաստուած Երկիր Միտիայի կողմէ՝ «Նախիջեւանը այսքան մօտ եւ այսքան հեռու», համադրուած ու ամփոփուած ձեւով ցուցադրուեցաւ: Ապա ներկաները կարգով հրաւիրուեցան մօտենալու շքեղօրէն զարդարուած սեղաններուն ստանալու համար հոն գետեղուած համեղ ուտելիքները: Սեղանին վրայ կարելի էր գտնել խորոված ոչխարը, միսով պատրաստուած փիլաւը, տարբեր տեսակի խորովածներ, միջուկով կոլոլակը (քօֆթէ), տերեւի տոլման եւ աղցանի տեսակներ, բոլորը պատրաստուած Նուր Հնտիի Ուտելիքի (Noor Fine Food) կողմէ: Զաշի ընթացքին աշուղական երգերու մեկնաբան՝ Մհեր Մինասեանը իր հմայիչ ձայնով ներկաներուն հրամցուց աշուղական երգերու շարք մը որ կու գար վերջին քանի մը հարիւր տարիներու ընդմեջէն, իւրաքանչիւր բաժնին հետ ան տուաւ նաեւ տեղեկութիւններ այդ շարքի աւանդական երգերու մասին: Ստեղնաշարի վրայ իրեն ընկերակցեցաւ Բաֆֆի Շանոյեանը: Զաշէն ետք ազգային տոհմիկ երաժշտութեամբ ելոյթ ունեցաւ Հորովել նուագախումբը, ղեկավարութեամբ Զիւան Ստեփանեանի եւ որուն մեներգներով ընկերացաւ գեղեցիկ ձայնով օժտուած Արմենիա Սարգիսեանը: Մինչեւ ուշ գիշեր Մհեր Մինասեանը իր երգերով խանդավառեց մթնոլորտը եւ ոգեւորեց ներկաները, որոնք մենապարերով եւ աշխոյժ շուրջպարերով մասնակցեցան ուրախութեան: Ներկաները մեկնելէ առաջ ուրախութեամբ իրենց գնահատանքը յայտնեցին ՀՕՄ-ի Տոհմիկ Օրուայ յանձնախումբի անդամներուն՝ շատ լաւ կազմակերպուած այս ձեռնարկին համար, մանրամասնութեամբ ուսումնասիրուած եւ բժախնդրօրէն պատրաստուած զիրքին համար եւ մեր պատմական ու հարուստ մշակութային ժառանգութիւնը պահպանելու եւ այսքան յաջող տարեկան ձեռնարկներով ներկայացնելու մասնաճիւղիս հետեւողական ջանքերուն համար: ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի անդամները անգամ մը եւս բացառիկ ձեռնարկ մը յաջողցուցած ըլլալու գոհունակ զգացումով մեկնեցան տուն:

